

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Արրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հակոբ Հակոբյանի, Հերմինե Նաղդայանի, Սուքիաս Ավետիսյանի, Գագիկ Մելիքյանի, Վահան Հովհաննիսյանի, Հեղինե Բիշարյանի, Սամվել Բալասանյանի, Մխիթար Հարությունյանի, Կորյուն Նահապետյանի, Արտակ Զաքարյանի, Տաճատ Վարդապետյանի, Արմեն Մխիթարյանի և Լյովա Խաչատրյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Բազմազավակ ընտանիքների աջակցության մասին», «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Նախադպրոցական կրթության

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի լրամշակված տարբերակի վերաբերյալ:

1. «Բազմազավակ ընտանիքների աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.

1) նախագիծը չի համապատասխանում «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հիմնական սկզբունքներին, մասնավորապես, հասցեականությանը՝ սոցիալական ծառայության տրամադրումն իսկապես դրա կարիքն ունեցողին, համարժեքությանը՝ կարիքին համարժեք սոցիալական ծառայության տրամադրումը, սոցիալական խնամառության բացառմանը՝ անձի ակտիվության դրսևորման և ինքնօգնության ունակությունների զարգացման սոցիալական աջակցությունից շարունակական կախվածությունը բացառելու համար: Մինչդեռ նախագծով նախատեսվում է բոլոր բազմազավակ ընտանիքներին, անկախ կարիքից, տրամադրել տարատեսակ սոցիալական ծառայություններ, այդ թվում՝ դրամական օգնություն, ընդ որում, այն չափով, որ բազմազավակ ընտանիքների չափահաս անդամների շրջանում հնարավոր է առաջացնի կախվածություն տվյալ օգնությունից և նվազեցնի աշխատելու ցանկությունը.

2) օրենքի ընդունման պարագայում անհրաժեշտ կլինի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում նախատեսել լրացուցիչ ֆինանսական միջոցներ: Մասնավորապես՝

ա. նախագծի 5-րդ հոդվածի՝

- 3-րդ մասով նախատեսվում է բազմազավակ ընտանիքներին տրամադրել ամենամյա վճար՝ ընտանիքի երրորդ և ավելի՝ յուրաքանչյուր երեխայի համար՝ մինչև նրա 18 տարեկանը լրանալը՝ նվազագույն աշխատավարձի չափով:

Համաձայն Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության տվյալների՝ Հայաստանի Հանրապետության ընտանիքների ընդհանուր թվից 6.2 տոկոսը երեք և ավելի երեխա ունեցող ընտանիքներն են:

Նախագծի հիմնավորման մեջ նշվել է, որ Հայաստանի Հանրապետության ընտանիքների թիվը 800 հազար է, ուստի, երեք և ավելի երեխա ունեցող ընտանիքների թիվը կկազմի 49600 ընտանիք:

Հաշվելով, որ երեք և ավելի երեխա ունեցող ընտանիքներում բնակվող երեխաների միջին թիվը կկազմի յուրաքանչյուրում մոտավորապես չորս երեխա, ապա 49600 ընտանիքների շուրջ 99200 երեխաների համար մեկ տարվա ընթացքում անհրաժեշտ կլինի 38,688 մլրդ դրամ ($99200 \times 32500 \times 12 = 38,688,000.0$):

Հայաստանի Հանրապետությունում 2010 թվականի դրությամբ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում շուրջ 25000՝ երեք և ավելի երեխա ունեցող ընտանիք ստանում է ընտանեկան նպաստ:

Նշված 25 հազար ընտանիքների համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսվել է տարեկան շուրջ 8 մլրդ դրամ ($25000 \times 26850 \times 12 = 8,000,000.0$):

Այսպիսով, նախագծի ընդունման դեպքում անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից այդ նպատակի համար հատկացնել լրացուցիչ շուրջ 30,7 մլրդ դրամ՝ այն դեպքում, որ ընտանեկան նպաստի համար 2011 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված է շուրջ 35,5 մլրդ դրամ.

- 4-րդ մասով նախատեսվող իրավունքի իրացման դեպքում անհրաժեշտություն կառաջանա լրացուցիչ բյուջետային հատկացումների՝ 2290 մլն դրամի չափով, որը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված 2012-2014 թվականների միջնաժամկետ ծրագրով նախատեսված չէ.

- 5-րդ մասով նախատեսված ամենամսյա դրամական օգնության համար 49600 ընտանիքների շուրջ 297,6 հազ. անդամների համար անհրաժեշտ կլինի շուրջ 17,4 մլրդ դրամ ($297600 \text{ անձ} \times 4875 \text{ դրամ} \times 12 \text{ ամիս} = 17,4 \text{ մլրդ դրամ}$):

Այսպիսով, օրենքի նախագծի ընդունման դեպքում միայն 5-րդ հոդվածով նախատեսված իրավունքների իրացման համար կպահանջվի տարեկան լրացուցիչ առնվազն 29.48 մլրդ դրամ ($30,8 \text{ մլրդ} + 2,29 \text{ մլրդ} + 17,4 \text{ մլրդ} = 50,4 \text{ մլրդ դրամ}$),

բ. նախագծի 6-10-րդ հոդվածներով նախատեսված բազմազավակ ընտանիքներին բնակարանով ապահովելու խնդրի լուծման համար անհրաժեշտ պետական աջակցության շրջանակներում պահանջվում են լրացուցիչ ֆինանսական միջոցներ, որոնք գնահատման կարիք ունեն.

3) օրենքի նախագծի վերնագրում, 1-ին հոդվածում «աջակցության» բառը փոխարինել «սոցիալական պաշտպանության» բառով.

4) 1-ին հոդվածի 1-ին կետում «կազմակերպչական, ֆինանսական և իրավական» բառերը փոխարինել «կազմակերպչական-իրավական և ֆինանսատնտեսական» բառերով.

5) 2-րդ հոդվածում հստակեցնել «բազմազավակ ընտանիք» հասկացությունը, քանի որ միայնակ ծնողի խնամքին չորս և ավելի երեխա գտնվելու պարագայում տվյալ ընտանիքը չի համարվի բազմազավակ, ինչպես նաև հստակեցնել «ընտանիք» հասկացությունը. արդյո՞ք, այդ ընտանիքի կազմում պետք է դիտարկվեն այլ ազգականներ ևս՝ տատիկ, պապիկ, հորեղբայր և այլն (նախագծի այլ հոդվածներով սահմանվում են երաշխիքներ, որոնք տրամադրվում են ընտանիքի յուրաքանչյուր անդամին).

6) 3-րդ հոդվածը հստակեցման կարիք ունի, քանի որ դրանով նախատեսված սոցիալական արտոնությունների իրականացումը գտնվում է տարբեր պետական մարմինների իրավասության ներքո.

7) 4-րդ հոդվածի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Բազմազավակ ընտանիքների մինչև 18 տարեկան և առկա (ցերեկային) ուսուցմամբ սովորող 18-23 տարեկան զավակները, ինչպես նաև նրանց ծնողներն իրավունք ունեն ստանալու անվճար բժշկական օգնություն և բժշկական սպասարկում՝ ամենամյա պետական նպատակային ծրագրերի շրջանակներում».

8) 5-րդ հոդվածի՝

ա. 2-րդ մասում «ընտանեկան նպաստի» բառերը փոխարինել «ընտանիքների անապահովության գնահատման» բառերով, 3-րդ մասից հանել «մինչև 18 տարեկան» և «մինչև նրա 18 տարեկանը լրանալը» բառերը, 4-րդ մասում «մինչև 18 տարեկան» բառերը փոխարինել «երեխաները» բառով, քանի որ «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն երեխա է համարվում 18 տարին չլրացրած յուրաքանչյուր ոք,

բ. 4-րդ մասը «զավակներն» բառից հետո լրացնել «և նրանց ծնողները» բառերով՝ հանելով «, իսկ ծնողների բժշկական օգնությունն ու բժշկական սպասարկումն անվճար են» բառերը,

գ. 5-րդ մասը հանել կամ ներառել 5-րդ հոդվածի 3-րդ մասում.

9) 6-րդ հոդվածի՝

ա. 1-ին մասում՝

- «չորս» բառը փոխարինել «երեք» բառով (սկստի ունենալով օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, որը սահմանում է՝ «Բազմազավակ են համարվում Հայաստանի Հանրապետությունում բնակվող այն ընտանիքները, որտեղ ծնվել և (կամ) որդեգրվել են և խնամվում են երեք և ավելի երեխաներ:»), «վերջին» բառը՝ «դիմելու պահին նախորդած» բառերով, և «տարածքը» բառից հետո լրացնել «կամ այնպիսի գույք, որի վաճառքից հետո կարող են գնել բնակարան» բառերով (սկստի ունենալով

այն հանգամանքը, որ բազմազավակ ընտանիքը կարող է ունենալ այլ անշարժ կամ շարժական գույք, որի վաճառքից հետո կարող է գնել բնակարան)։

- հստակեցնել «բնակելի տարածք» հասկացությունը, ինչպես նաև՝ 25 տարի չօտարելու պայմանով բնակարանի տրամադրումը ինչ իրավունքով է տրվելու՝ սեփականության իրավունքով, թե՛ անհատույց օգտագործման իրավունքով,

բ. 1-ին մասով՝ բնակարանով ապահովելու համար սահմանված դրույթը հակասում է 7-րդ հոդվածի 1-րդ մասի դրույթին, մասնավորապես, 6-րդ հոդվածի 1-ին մասով առաջարկվում է բազմազավակ ընտանիքներին ցուցաբերել աջակցություն՝ տրամադրելով բնակարան, իսկ 7-րդ հոդվածի 1-ին մասով առաջարկվում է բնակարանի գնման կամ բնակարանի կառուցման համար վարկի տրամադրում։ Բացի դրանից, կարգավորման կարիք ունեն այն դեպքերը, երբ բազմազավակ ընտանիքը ֆինանսական միջոցների բացակայության պատճառով հնարավորություն չի ունենա օգտվելու տրամադրվող վարկից,

գ. 2-րդ մասը «15 քառակուսի մետրից» բառերից առաջ լրացնել «ընդհանուր մակերեսով» բառերով.

10) 7-րդ հոդվածի՝

ա. 2-րդ մասով նախատեսված համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերը՝

- անհատույց սեփականության իրավունքով լեռնային, բարձր լեռնային, երկրաշարժից տուժած և լքված բնակավայրերում գտնվող բազմազավակ ընտանիքներին բնակարան կառուցելու նպատակով կարող են տրամադրվել միայն համայնքի ավագանու որոշմամբ՝ նկատի ունենալով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի պահանջները, որոնց համաձայն համայնքի ավագանին նշված օրենքով սահմանված կարգով, համայնքի

ղեկավարի առաջարկությամբ, որոշում է ընդունում համայնքի սեփականությունը համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարելու մասին.

- սահմանափակ ռեսուրսների և օրենքով համայնքին նմանատիպ գործընթացի պարտադրումն առնվազն պետք է ենթադրի որոշակի ֆինանսական միջոցներով փոխհատուցում, որը նույնպես պետք է ամրագրվի օրենքով.

- առաջարկում ենք 2-րդ մասը «բնակավայրերում» բառից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով» բառերով, ինչով պետք է կարգավորվեն յուրաքանչյուր շնչի համար տրամադրվող հողակտորի չափը և նմանատիպ այլ գործառույթներ,

բ. առաջարկում ենք հանել 4-րդ մասը, քանի որ տրամաբանական չէ վարկի տոկոսադրույքի համեմատումը գնաճի չափի հետ: Գնաճը յուրաքանչյուր տարվա համար կարող է լինել փոփոխական, այդ թվում՝ նախորդ տարվա նկատմամբ ունենալով մեծ տարբերություն, կառաջացնի անհավասար պայմաններ.

11) անհրաժեշտ է 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ հոդվածներն ամբողջությամբ լրամշակել՝ սահմանելով բազմազավակ ընտանիքի բնակարանային ապահովության կարիքի գնահատման կարգը, բնակելի տարածության հատկացման (վարկ կամ սոցիալական բնակարանի վարձակալություն) սկզբունքները, հատկացվող բնակելի տարածության նվազագույն ստանդարտները, պետական աջակցությունն ստանալու համար դիմելու, հաշվառվելու կարգն ու ժամկետները, իրավունքի դադարեցման հիմքերը և վերահսկման մեխանիզմները, բազմազավակ ընտանիքի, ինչպես նաև պաշտոնատար անձանց պատասխանատվությունը՝ օրենքով սահմանված դրույթների խախտման դեպքում:

Հարկ ենք համարում տեղեկացնել, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի նիստի N 53 արձանագրային որոշմամբ

հավանության արժանացած՝ Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2010 թվականի պետական ծրագրի N 2 հավելվածով նախատեսված է մշակել և Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը ներկայացնել «Հայաստանի Հանրապետության բնակարանային պայմանների բարելավման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որով կսահմանվեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիների բնակարանային պայմանների բարելավման սահմանադրական իրավունքի իրագործմանը պետական աջակցության սկզբունքները, բնակտարածությամբ ապահովման ձևերը և կարգը: Ուստի, առաջարկում ենք նախագծի 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ հոդվածներով սահմանված դրույթները տեղափոխել և ամրագրել «Հայաստանի Հանրապետության բնակարանային պայմանների բարելավման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում:

2. «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով նախատեսվում է հողի հարկից բազմազավակ ընտանիքների ազատում, սակայն, «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածին համապատասխան, հողի հարկվճարողներ են հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները: Հողի հարկով հարկվող օբյեկտը կարող է սեփականության իրավունքով պատկանել ընտանիքի անդամներից մեկին, հնարավոր է նաև՝ ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով: Միաժամանակ, բազմազավակ ընտանիքի անդամը կարող է ունենալ ոչ ընդհանուր (ընտանիքի) օգտագործման հողի հարկով հարկվող այլ օբյեկտ: Հարկ է նկատի ունենալ, որ չի բացառվում նույն գույքի բաժնային սեփականության դեպքում ընտանիքի անդամ չհանդիսացող այլ սեփականատիրոջ առկայությունը:

Ներկայացված նկատառումներով հողի հարկի արտոնությունը պետք է սահմանել ոչ թե ընտանիքի, այլ ընտանիքի՝ հողի հարկով հարկվող օբյեկտի սեփականատեր հանդիսացող անդամի (անդամների) համար՝

1) սեփականության իրավունքով բազմազավակ ընտանիքի անդամներին պատկանող՝ գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերից բնակելի կառուցապատման հողերի մասով.

2) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող՝ գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերից բնակելի կառուցապատման հողերի դեպքում՝ իրենց բաժնի մասով.

3) ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող՝ գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերից բնակելի կառուցապատման հողերի մասով, եթե, բազմազավակ ընտանիքի անդամներից բացի, մյուս համասեփականատերերն անչափահաս կամ անաշխատունակ անձինք են:

Անորոշ է, թե բազմազավակ ընտանիքի անդամներն ինչ ժամանակահատվածում են օգտվում հողի հարկի արտոնությունից: «Բազմազավակ ընտանիքների սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածով սահմանվում է, որ բազմազավակ են համարվում Հայաստանի Հանրապետությունում բնակվող այն ընտանիքները, որտեղ ծնվել և (կամ) որդեգրվել ու խնամվում են չորս և ավելի երեխաներ: Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 41-րդ հոդվածին համապատասխան՝ երեխա է համարվում տասնութ տարին չլրացած անձը: Արդյո՞ք, հողի հարկի արտոնությունից բազմազավակ ընտանիքի անդամները կօգտվեն՝ մինչև ընտանիքում երեխաների (18 տարին չլրացած անձանց) թիվը չորսից պակաս լինելը:

Հարկ է նկատի ունենալ, որ, համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ և 71-րդ հոդվածների, համայնքի սեփական եկամուտները նվազեցնող օրենքների ընդունման դեպքում համայնքի կրած համապատասխան վնասի չափը ենթակա է պետության կողմից փոխհատուցման:

Նույն դիտողությունները վերաբերում են նաև «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին:

3. «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով նախատեսվում է, որ գույքահարկից ազատվում են բազմազավակ ընտանիքները, սակայն «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն գույքահարկ վճարող է ոչ թե «ընտանիքը», այլ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց Հայաստանի Հանրապետության տարածքում պատկանում է հարկվող օբյեկտ համարվող գույք:

Օրենքի նախագծի տրամաբանությունից ստացվում է, որ դրանով ներկայացված առաջարկությունը ոչ միայն բազմազավակ ընտանիքների սոցիալական աջակցության նպատակն ունի, այլև, ընդհանրապես, հարկային արտոնությունների տրամադրման, քանի որ գույքահարկով հարկվող օբյեկտ են համարվում նաև հասարակական և արտադրական շենքերը և շինությունները:

Ներկայացված նկատառումներով գույքահարկի արտոնությունը պետք է սահմանել ոչ թե ընտանիքի, այլ ընտանիքի՝ գույքահարկով հարկվող օբյեկտի սեփականատեր հանդիսացող անդամի (անդամների) համար՝

1) սեփականության իրավունքով բազմազավակ ընտանիքի անդամներին պատկանող՝ գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող՝ հասարակական և (կամ) արտադրական նշանակության շինություն չհանդիսացող շենքերի ու շինությունների և (կամ) փոխադրամիջոցների մասով.

2) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող՝ գույքահարկով հարկվող օբյեկտի (հասարակական և (կամ) արտադրական նշանակության շինություն չհանդիսացող շենքերի և շինությունների) դեպքում հարկվող օբյեկտի իրենց բաժնի մասով.

3) ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող՝ գույքահարկով հարկվող օբյեկտի (հասարակական և (կամ) արտադրական նշանակության շինություն չհանդիսացող շենքերի և շինությունների) մասով, եթե, բազմազավակ ընտանիքի անդամներից բացի, մյուս համասեփականատերերն անչափահաս կամ անաշխատունակ անձինք են:

Օրենքի նախագիծն օրենսդրական տեխնիկայի առումով լրամշակման կարիք ունի, մասնավորապես, նախագծի 1-ին հոդվածում անհրաժեշտ է «ՀՕ-491» թիվը փոխարինել «ՀՕ-491-Ն» թվով և նկատի ունենալ այն, որ «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասում 7-րդ կետ արդեն իսկ նախատեսված է:

4. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը չի բխում կենսաթոշակային ապահովության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության որդեգրած քաղաքականության գաղափարաբանությունից, և անընդունելի է «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կենսաթոշակի նկատմամբ հավելում սահմանելը:

Հարկ ենք համարում նշել, որ «Պետական կենսաթոշակների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-243-Ն օրենքով վերացվեցին նաև զինվորական կենսաթոշակների տրվող հավելումները:

Օրենքի նախագծի ընդունումը հանգեցնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից լրացուցիչ հատկացումների անհրաժեշտության, որի համար համապատասխան միջոցներ նախատեսված չեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության 2012-2014 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» N 955-Ն որոշմամբ:

5. «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով առաջարկվում է ֆիզիկական անձանց ստացած եկամուտները եկամտային հարկով հարկելիս կիրառել եկամտային հարկի տարբերակված դրույքաչափեր՝ հիմք ընդունելով տվյալ ֆիզիկական անձի խնամքի տակ գտնվող երեխաների թիվը: Մասնավորապես, օրենքի նախագծով առաջարկվում է ավելի քիչ երեխաներ ունեցող ֆիզիկական անձանց համար սահմանել եկամտային հարկի ավելի բարձր դրույքաչափեր:

Այդ կապակցությամբ գտնում ենք, որ օրենքի նախագծով ներկայացված առաջարկությունը, ըստ էության, նշանակում է եկամտային հարկով հարկման նպատակով հիմք ընդունել ոչ թե ֆիզիկական անձի, այլ նրա ընտանիքի եկամուտներն ու նվազեցումները, ինչը, կարծում ենք, հիմնավոր չէ:

Բացի դրանից, օրենքի նախագծի ընդունումը նկատելիորեն կբարդացնի ինչպես հարկային գործակալների, այնպես էլ՝ հարկային մարմինների կողմից կատարվող աշխատանքները՝ կապված ֆիզիկական անձանց՝ վճարման ենթակա եկամուտներից եկամտային հարկի գումարները հաշվարկելու, պահելու, Հայաստանի Հանրապետու-

թյան պետական բյուջե փոխանցելու, ինչպես նաև հարկային հաշվառման նկատմամբ արդյունավետ հսկողություն սահմանելու հետ:

Օրենքի նախագծով առաջարկվող կարգի կիրառությունը ենթադրում է երրորդ անձանցից տեղեկությունների ստացման, մշակման ու պահպանման համակարգերի զարգացում՝ հաշվի առնելով այն, որ հարկային մարմինները պետք է հստակ տեղեկատվություն ունենան յուրաքանչյուր ֆիզիկական անձի կողմից խնամվող երեխաների թվի մասին:

Հարկ ենք համարում նշել, որ «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույքաչափերը որոշվել են խոր ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքների հիման վրա, որպեսզի սկզբունք որդեգրելով՝ հարկման համակարգի փոփոխությունը չհանգեցնի ֆիզիկական անձանց հարկային բեռի բարձրացման:

Հաշվի առնելով նշված նկատառումները՝ օրենքի նախագծի ընդունումը համարում ենք ոչ նպատակահարմար և գտնում ենք, որ առավել նպատակահարմար է բնակչության ծնելիության մակարդակի բարձրացման խնդիրը լուծել սոցիալական քաղաքականության շրջանակներում իրականացվող այլ նպատակային ու առավել հասցեական ծրագրերի իրականացմամբ:

«Եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն 2013 թվականի հունվարի 1-ից՝ կենսաթոշակային համակարգի բարեփոխումների իրականացման շրջանակներում ներդրվելու է եկամտային հարկի հաշվառման անձնավորված համակարգ, որը նշանակում է, որ գործատուներն անձնավորված հաշվետվությունները Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնելու են յուրաքանչյուր ամիս՝ բացառապես էլեկտրոնային եղանակով: «Եկամտային

հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման առումով անհրաժեշտ կլինի գնահատել բազմազավակ ընտանիքների եկամուտների, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների վրա դրա ազդեցությունը և հաշվառման հետ կապված խնդիրները, այսինքն՝ եկամտային հարկի դրույքաչափերի բազմաստիճան սանդղակի կիրառման դեպքում՝

1) դրույքաչափերը, չնչին տարբերություն ունենալով, հարկի կրճատման հաշվին ընտանիքի եկամուտների չնչին ավելացում ապահովելով, էականորեն կբարդացնեն և անհնարին կդարձնեն եկամտային հարկի անձնավորված հաշվետվությունների կազմման և ընդունման (մասնավորապես, մի քանի ամսվան վերաբերող եկամուտներից եկամտային հարկի ավտոմատացված հաշվարկման) հնարավորությունը.

2) Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 41-րդ հոդվածին համապատասխան, ըստ որի երեխա է համարվում տասնութ տարին չլրացած անձը, «երեխա խնամքի տակ չունեցող» հասկացությունը ներառում է ընտանիքների գերակշռող մասը, որոնց եկամուտները հարկվելու են եկամտային հարկի նման բարձր (26-27,5 տոկոս) դրույքաչափերով, իսկ 2014 թվականից հետո՝ այդ եկամուտներից պահվելու է ևս 5-10 տոկոս պարտադիր կուտակային վճար, այսինքն՝ ընդհանուր առմամբ, աշխատողը կամ անհատ ձեռնարկատերն իր եկամուտների 31-37,5 տոկոսը վճարելու է որպես հարկ կամ պարտադիր վճար, ինչն անընդունելի է և ուղղակիորեն նպաստելու է ստվերի ավելացմանը.

3) խիստ կավելանա գործատուների կողմից հաշվետվությունները կազմելու և ներկայացնելու սխալների ու անճշտությունների թիվը, որոնք լուրջ հետևանքների կարող են հանգեցնել (հաշվետվությունների ներկայացման ուշացումներ և տուգանքների կիրառում).

4) ավելի կբարդանա հարկային մարմինների կողմից անձնավորված հաշվառման նկատմամբ առանց այն էլ բավական բարդ հսկողական աշխատանքների արդյունավետ իրականացումը:

6. «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը հանգեցնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից լրացուցիչ հատկացումների անհրաժեշտության, որի համար համապատասխան միջոցներ նախատեսված չեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության 2012-2014 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» N 955-Ն որոշմամբ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը հետևողական է առկա միջոցների սահմաններում Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավման պետական ծրագրային հարցերում, սակայն ներկայացված օրենքների նախագծերի ընդունումը հանգեցնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից լրացուցիչ հատկացումների անհրաժեշտության, որի համար համապատասխան միջոցներ նախատեսված չեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության 2012-2014 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» N 955-Ն որոշմամբ: Ուստի, օրենքների նախագծերի փաթեթի ընդունման դեպքում այն կմնա առանց ֆինանսական ապահովման:

Ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն պետք է ընդունվի պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքների նախագծերի փաթեթի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արթուր Գրիգորյանը:

Ներկայացնում ենք օրենքների նախագծերի փաթեթի ընդունման դեպքում ընդունումից հետո դրանց կատարումն ապահովող Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների կամ այլ իրավական ակտերի ցանկը, որոնց համար կպահանջվի շուրջ 6 ամիս՝

«Բազմազավակ ընտանիքների աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝

1) 3-րդ հոդվածի 1-ին մաս՝ «Բազմազավակ ընտանիքների համար արտոնությունների իրագործման երաշխիքների ապահովման համար Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմին ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ.

2) 4-րդ հոդվածի 1-ին մաս՝ «Բազմազավակ ընտանիքների կարգավիճակը հաստատող փաստաթղթի նմուշը և տրամադրման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ.

3) 5-րդ հոդվածի 4-րդ մաս՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ.

4) 5-րդ հոդվածի 5-րդ մաս՝ «Բազմազավակ ընտանիքներին ամենամյա դրամական օգնություն հատկացնելու կարգն ու չափը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ.

5) 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ՝ «Բազմազավակ ընտանիքներին բնակարանի գնման համար վարկի տրամադրման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ.

6) 9-րդ հոդվածի 2-րդ մաս՝ «Բազմազավակ ընտանիքներին բնակարանի համար հաշվառման վերցնելու, տրամադրելու, նրանց հետ պայմանագիր կնքելու, նրանց վարկ տրամադրելու, տրամադրված վարկի գումարի չափը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Եզրակացություններ

«Բազմազավակ ընտանիքների աջակցության մասին», «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման

I. Առողջապահության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացություններ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 23-ի N 1104-Ն որոշման պահանջներով, «Բազմազավակ ընտանիքների աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ տեղեկացվում է.

1. **Նախագծի կարգավորման արդյունքները.**

առաջարկվող նախագծի 4-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսվող առաջարկությունը դրական կանդիդատնա բնակչության՝ հատկապես բազմազավակ ընտանիքների երեխաների և նրանց ծնողների առողջական վիճակի բարելավման, բուժօգնության մատչելիության և հասանելիության վրա:

Նախագծի ընդունումը կունենա ազդեցություն բնակչությանը մատուցվող պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման ֆինանսավորման վրա: Ենթադրվում է, որ «Բազմազավակ ընտանիքների աջակցության մասին» օրենքի ընդունումից հետո առկա 50 000 ընտանիքից տարեկան միջինում շուրջ 35 000 ընտանիք ևս կճանաչվեն բազմազավակ և իրավունք կունենան ստանալու պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում:

$$\begin{aligned} 50\ 000 - 15\ 000 &= 35\ 000 \text{ ընտանիք} \\ 35\ 000 \times 3 \text{ երեխա} &= 105\ 000 \text{ երեխա} \\ 105\ 000 \times 8\% &= 8\ 400 \text{ դեպք} \\ 8\ 400 \times 140\ 000 \text{ դրամ} &= 1\ 176 \text{ մլն դրամ} \end{aligned}$$

Երեխաների կտրվածքով բյուջեի ծախսային մասը կավելանա 1 176 մլն դրամով

Բազմազավակ ընտանիքների ծնողների մասով

$$\begin{aligned} 50\ 000 \times 2 &= 100\ 000 \text{ մարդ} \\ 100\ 000 \times 8\% &= 8\ 000 \text{ դեպք} \\ 8\ 000 \times 140\ 000 \text{ դրամ} &= 1\ 120 \text{ մլն դրամ} \end{aligned}$$

ինչը ենթադրում է ՀՀ պետական բյուջեի առողջապահություն բաժնի հատկացումների հիվանդանոցային բուժօգնության ծառայությունների ծախսերի ավելացում լրացուցիչ տարեկան 2 290 մլն ՀՀ դրամ:

Օրենքի նախագծով նախատեսված այլ նորմերի ընդունումը առողջապահության համակարգի վրա էական ազդեցություն չի ունենա:

2. **Բազմազավակ ընտանիքների առողջական վիճակի և բուժօգնության վերաբերյալ վիճակագրական տվյալները**

մինչ այժմ վերաբերել են միայն մինչև 18 տարեկան 4 և ավելի երեխաներ ունեցող ընտանիքների երեխաներին և 2010թ. դրությամբ ըստ ԱՎԾ-ի տվյալների այդ ընտանիքներում կան մոտ 60000 երեխա:

3. Նախագծի կիրարկման արդյունքում կանխատեսող հետևանքները գնահատելու ժամանակացույցը.

Նախագծի ընդունումից հետո բուժօգնության ծավալների վրա կանխատեսվող հետևանքները հնարավոր կլինի գնահատել օրենքից բխող իրավական ակտերի մշակումից և կիրարկումից հետո մեկ տարի անց, իսկ բնակչության առողջության վրա՝ երեք տարի անց:

«Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», և «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունումը առողջապահական համակարգի վրա ազդեցություն չի ունենա:

II. Տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացություն.

ՀՀ օրենքների նախագծերի գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ նախագծերը վերաբերում են բազմազավակ ընտանիքների համար արտոնությունների սահմանմանը և նախագծերի ընդունման դեպքում, դրանց կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն չի նախատեսվում:

III. Մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացություն

ՀՀ օրենքների նախագծերով արտոնյալ պայմաններ են ստեղծվում բազմազավակ ընտանիքների համար:

Նախագծերի մրցակցության բնագավառում ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է, որ նախագծերով կարգավորվող շրջանակները չեն առնչվում ապրանքային շուկաների հետ, ուստի և նախագծերի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով նախագծերի

ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա ազդեցություն չհայտնաբերվելու եզրակացություն:

IV. Հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացություն

Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

V. Բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացություն

1) «Բազմազավակ ընտանիքների աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.

Նախագծով առաջարկվում է սահմանել բազմազավակ ընտանիք հասկացությունը, բազմազավակ ընտանիքների պետական աջակցության տեսակները և շրջանակները:

Միաժամանակ, նախագծի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, որպես բազմազավակ ընտանիքների պետական աջակցության տեսակ, ի թիվս նախագծով առաջարկվող պետական աջակցության այլ տեսակների, առաջարկվում է սահմանել նվազագույն աշխատավարձի չափով ամսական դրամական օգնություն՝ խնամքի տակ մինչև 18 տարեկան երեխա ունեցող բազմազավակ ընտանիքների համար: Ընդ որում, նույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն, վերոհիշյալ օգնության գումարները հարկման ենթակա չեն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագիծն ուժի մեջ է մտնելու 2013 թվականի հունվարի 1-ից, ինչպես նաև այն, որ 2013 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտնող «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն սոցիալական պաշտպանության համակարգի շրջանակներում վճարվող դրամական օգնությունները եկամտային հարկով հարկման նպատակով համարվելու են նվազեցվող եկամուտներ (այսինքն, եկամտային հարկով չեն հարկվելու)՝ ուստի, նախագծի՝ պետական բյուջեի եկամուտների վրա ազդեցությունը չեզոք է:

2) «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.

Նախագծով առաջարկվում է որպես տեղական ինքնակառավարման մարմնի՝ նախադպրոցական կրթության ոլորտի լիազորության, սամանել նաև բազմազավակ ընտանիքների երեխաների համար անվճար նախադպրոցական կրթության ապահովումը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագծով ներկայացված վերոհիշյալ առաջարկը պետական բյուջեի եկամուտների վրա ազդեցություն ունենալ չի կարող՝ ուստի, նախագծի՝ պետական բյուջեի եկամուտների վրա ազդեցությունը չեզոք է:

3) «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ.

«Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով առաջարկվում է բազմազավակ ընտանիքների համար սահմանել հողի հարկի և գույքահարկի արտոնություններ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ նախագծերի ընդունումը կարող է հանգեցնել համայնքների եկամուտների նվազեցման:

Միաժամանակ, տեղեկացվում է, որ վերոնշյալ օրենքների նախագծերի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության կոնկրետ գնահատական հնարավոր է տրամադրել միայն բազմազավակ ընտանիքներին պատկանող հողերի և գույքային միավորների վերաբերյալ տեղեկատվության առկայության պարագայում:

4) «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

Նախագծով առաջարկվում է բազմազավակ ընտանիքների ծնողների համար սահմանել կենսաթոշակի հավելում՝ հիմնական կենսաթոշակի 25 տոկոսի չափով:

Հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաև այն, որ 2013 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտնող՝ «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն վճարվող կենսաթոշակները համարվում են նվազեցվող եկամուտներ (այսինքն, եկամտային հարկով չեն հարկվում)՝ ուստի, նախագծի՝ պետական բյուջեի եկամուտների վրա ազդեցությունը չեզոք է:

5) «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

Նախագծով առաջարկվում է ֆիզիկական անձանց ստացված եկամուտները եկամտային հարկով հարկելիս կիրառել եկամտային հարկի տարբերակված դրույքաչափեր՝ հիմք ընդունելով տվյալ ֆիզիկական անձի խնամքի տակ գտնվող երեխաների թիվը: Մասնավորապես, նախագծով առաջարկվում է ավելի քիչ երեխաներ ունեցող ֆիզիկական անձանց համար սահմանել եկամտային հարկի ավելի բարձր դրույքաչափեր:

Հաշվի առնելով վերոգրյալը, նախագիծը կարող է դրականորեն ազդել պետական բյուջեի եկամուտների վրա:

VI. Բնապահպանության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացություն

1. Նախագծերի ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների, վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքների նախագծերի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքների նախագծերը բնապահպանության ոլորտին չեն առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չեն հակասում:

Օրենքների կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում են:

VII. Սոցիալական պաշտպանության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացություն

Նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 18-Ն որոշման համաձայն:

Գնահատման արդյունքում նախագծերը՝

1. սոցիալական պաշտպանության ոլորտի վրա ունեն որոշակի դրական ազդեցություն.

2. սոցիալական պաշտպանության ոլորտում իրավական ակտի որոշակի դրական ազդեցությունը նկատվում է ինչպես ռազմավարական ցուցանիշների, այնպես էլ հաճախորդների վրա ունեցած ազդեցությամբ.

3. նախագծերի դրական ազդեցությունը առավել ուժեղացնելու նպատակով անհրաժեշտ է այն լրամշակել:

«Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ կենսաթոշակային ապահովության ոլորտում ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կենսաթոշակային ապահովության ոլորտում օրենքի նախագծի՝

ա) ռազմավարական ազդեցությունը բացասական է, քանի որ չի բխում կենսաթոշակային ոլորտում վարվող քաղաքականությունից,

բ) շահառուների վրա ազդեցությունը դրական է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Բազմազավակ ընտանիքների աջակցության մասին

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում բազմազավակ ընտանիքների սոցիալական աջակցության կազմակերպչական, ֆինանսական եւ իրավական հիմքերը:

Հոդված 2. Բազմազավակ ընտանիք հասկացությունը

1. Բազմազավակ են համարվում Հայաստանի Հանրապետությունում բնակվող այն ընտանիքները, որտեղ ծնվել եւ (կամ) որդեգրվել են եւ խնամվում են երեք եւ ավելի երեխաներ:

Հոդված 3. Բազմազավակ ընտանիքների նկատմամբ պետական քաղաքականության իրականացումը

1. Բազմազավակ ընտանիքների համար սույն օրենքով եւ այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված սոցիալական արտոնությունների իրագործման երաշխիքներն ապահովում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմինը (այսուհետ՝ լիազորված մարմին)՝ պետական նպատակային ծրագրերի իրականացման միջոցով:

Հոդված 4. Բազմազավակ ընտանիքների կարգավիճակը հաստատող փաստաթուղթը

1. Բազմազավակ ընտանիքների կարգավիճակը հաստատող միասնական նմուշի փաստաթուղթը տալիս է լիազորված մարմինը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգի:

Հոդված 5. Բազմազավակ ընտանիքների սոցիալական պաշտպանության իրավունքը

1. Բազմազավակ ընտանիքների սոցիալական պաշտպանությունն իրականացվում է սույն օրենքով եւ իրավական այլ ակտերով սահմանված կարգով:
2. Բազմազավակ ընտանիքները չեն հաշվառվում ընտանեկան նպաստի համակարգում:
3. Այն ընտանիքները, որտեղ ծնվել եւ (կամ) որդեգրվել են եւ խնամվում են երեք եւ ավելի մինչեւ 18 տարեկան երեխաներ, ստանում են ամենամսյա դրամական օգնություն՝ երրորդ եւ ավելի յուրաքանչյուր երեխայի համար մինչեւ նրա 18 տարեկանը լրանալը նվազագույն ամսական աշխատավարձի չափով:

Ամենամսյա դրամական օգնությունը ենթակա չէ հարկման:

4. Բազմազավակ ընտանիքների մինչեւ 18 տարեկան եւ առկա (ցերեկային) ուսուցմամբ սովորող 18-23 տարեկան զավակներն իրավունք ունեն պետական պատվերի

շրջանակում ստանալու անվճար բժշկական օգնություն եւ բժշկական սպասարկում, իսկ ծնողների բժշկական օգնությունն ու բժշկական սպասարկումն անվճար են:

5. Բազմազավակ ընտանիքներին էլեկտրաէներգիայի, գազի, ջրամատակարարման եւ ջրահեռացման, հեռախոսի, ռադիոյի, բնակարանի, աղբահանության վարձերը վճարելու եւ Հայաստանի Հանրապետության տարածքում անվճար քաղաքային եւ մերձքաղաքային մարդատար տրանսպորտի (անկախ սեփականության ձեւից) բոլոր տեսակներով (բացի տաքսիներից) երթեւեկելու համար տրվում է ամենամսյա դրամական օգնություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով եւ չափով:

Ամենամսյա դրամական օգնությունը ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար չի կարող պակաս լինել նվազագույն ամսական աշխատավարձի 15 տոկոսից:

Հոդված 6. Բազմազավակ ընտանիքներին բնակարանով ապահովելու համար պետական աջակցություն ցուցաբերելու պայմանները

1. Այն բազմազավակ ընտանիքներին, որոնք ունեն չորս եւ ավելի երեխաներ եւ չունեն նվազագույն սոցիալական չափորոշիչներին համապատասխան բնակելի տարածք եւ վերջին երեք տարիների ընթացքում չեն օտարել սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածքը, ցուցաբերվում է՝ աջակցություն՝ տրամադրելով բնակարան՝ 25 տարի չօտարելու պայմանով:

2. Սույն օրենքով նվազագույն սոցիալական չափորոշիչներին համապատասխան բնակելի տարածք է համարվում ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար 15 քառակուսի մետրից ոչ պակաս տարածքը:

Հոդված 7. Բազմազավակ ընտանիքներին բնակարանով ապահովելու համար պետական աջակցությունը

1. Բազմազավակ ընտանիքներին բնակարանով ապահովելու պետական աջակցությունը պետական բյուջեից եւ այդ նպատակով նախատեսված միջոցներից բնակարանի գնման կամ բնակարանի կառուցման համար վարկի տրամադրումն է:

2. Ընտանիքի անդամների համաձայնությամբ բազմազավակ ընտանիքներին բնակարան կառուցելու նպատակով տրամադրվում է հողամաս՝ անհատույց սեփականության իրավունքով, համայնքների սեփականությանը պատկանող սահմանամերձ, լեռնային, բարձրլեռնային, երկրաշարժից տուժած եւ լքված բնավայրերում:

3. Սեփականության իրավունքով անհատույց տրամադրվող հողամասը, ինչպես նաեւ բնակարան գնելու կամ կառուցելու համար վարկը ընտանիքներին տրամադրվում են մեկ անգամ:

4. Բնակարան գնելու կամ կառուցելու համար տրամադրվող վարկի տոկոսադրույքը չի կարող ավել լինել տվյալ տարվա փաստացի գնաճի չափից:

Հոդված 8. Բազմազավակ ընտանիքներին բնակարանով ապահովելու պետական աջակցության տեսակները

1. Բազմազավակ ընտանիքներին բնակարանով ապահովելու պետական աջակցության տեսակներն են՝

- 1) բնակարանի գնման համար 25 տարի մարման ժամկետով վարկի տրամադրում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով.
- 2) սեփականության իրավունքով տրամադրված հողամասում բնակարան կառուցելու համար 25 տարի մարման ժամկետով վարկի տրամադրում:
2. Բնակարանի գնումից կամ վարկի տրամադրումից հետո ընտանիքում ծնված յուրաքանչյուր երեխայի հաշվարկով կատարվում է սուբսիդավորում՝ վարկի մարման մնացորդային գումարի 10 %-ի չափով:

Հոդված 9. Բազմազավակ ընտանիքներին բնակարանով ապահովելու համար պետական աջակցություն ցուցաբերելու կարգը

1. Բազմազավակ ընտանիքներին բնակարանով ապահովելու համար պետական աջակցության դեպքում տրամադրվում է բնակարան՝ լիազոր մարմնի հրամանով, որի հիման վրա բազմազավակ ընտանիքի հետ կնքվում է պայմանագիր:
2. Բազմազավակ ընտանիքներին բնակարանի համար հաշվառման վերցնելու, տրամադրելու, նրանց հետ պայմանագիր կնքելու, նրանց վարկ տրամադրելու կարգերը, ինչպես նաև նրանց տրամադրված վարկի գումարի չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 10. Բազմազավակ ընտանիքներին պետական աջակցություն ցուցաբերելու ֆինանսավորման աղբյուրները

1. Սույն օրենքով սահմանված ծախսերը ֆինանսավորվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

Հոդված 11. Սույն օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

Լրամշակված տարբերակ
Պ-1109²-30.03.2011, 19.07.2011-ՍՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

«Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

Հոդված 1. «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-236-Ն օրենքի 17-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ «թ» կետով.

«թ) ապահովում է անվճար նախադպրոցական կրթություն բազմազավակ ընտանիքների երեխաների համար:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

*Լրամշակված փարբերակ
Պ-1109³-30.03.2011,19.07.2011-ԱՀ-010/0*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

«Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

Հոդված 1. «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 1994 թվականի ապրիլի 27-ի ՀՕ-101 օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «թ» կետով.

«թ) բազմազավակ ընտանիքները:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

*Լրամշակված փարբերակ
Պ-1109⁴-30.03.2011,19.07.2011-ԱՀ-010/0*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

«Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

Հոդված 1. «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-491 օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ կետով.

«7) բազմազավակ ընտանիքները:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

*Լրամշակված փարբերակ
Պ-1109⁵-30.03.2011,19.07.2011-ԱՀ-010/0*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

«Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին

Հոդված 1. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-243-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մասով.

«6. բազմազավակ ընտանիքների ծնողների կենսաթոշակին տրվում է հավելում՝ յուրաքանչյուր երեխայի համար հիմնական կենսաթոշակի 25 տոկոսի չափով:»:

Հոդված 2. Օրենքի 28-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. բազմազավակ ընտանիքների ծնողների կենսաթոշակին տրվում է հավելում՝ յուրաքանչյուր երեխայի համար հիմնական կենսաթոշակի 25 տոկոսի չափով:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

Լրամշակված փարբերակ
Պ-1109⁷-30.03.2011,19.07.2011-ԱՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին

Հոդված 1. «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-246-Ն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Բացառությամբ սույն հոդվածի 2-8-րդ մասերում նշված դեպքերի՝

1) հարկային գործակալը եկամտային հարկը հաշվարկում է հետևյալ դրույքաչափերով.

ա. ծնված եւ (կամ) որդեգրված եւ խնամվող երեք եւ ավելի երեխա խնամքի տակ ունենալու դեպքում՝

Ամսական հարկվող եկամտի չափը	Հարկի գումարը
Մինչեւ 120000 դրամ	Հարկվող եկամտի 24.5 տոկոսը
120000 դրամից ավելի	29.400 դրամին գումարած 120.000 դրամը գերազանցող գումարի 26 տոկոսը

բ. ծնված եւ (կամ) որդեգրված եւ խնամվող երկու երեխա խնամքի տակ ունենալու դեպքում՝

Ամսական հարկվող	Հարկի գումարը
-----------------	---------------

Եկամտի չափը	
Մինչեւ 120000 դրամ	Հարկվող եկամտի 25 տոկոսը
120000 դրամից ավելի	30.000 դրամին գումարած 120.000 դրամը գերազանցող գումարի 26.5 տոկոսը

գ. ծնված եւ (կամ) որդեգրված եւ խնամվող մեկ երեխա խնամքի տակ ունենալու դեպքում՝

Ամսական հարկվող եկամտի չափը	Հարկի գումարը
Մինչեւ 120000 դրամ	Հարկվող եկամտի 25.5 տոկոսը
120000 դրամից ավելի	30.600 դրամին գումարած 120.000 դրամը գերազանցող գումարի 27 տոկոսը

դ. ծնված եւ (կամ) որդեգրված եւ խնամվող երեխա խնամքի տակ չունենալու դեպքում՝

Ամսական հարկվող եկամտի չափը	Հարկի գումարը
Մինչեւ 120000 դրամ	Հարկվող եկամտի 26 տոկոսը
120000 դրամից ավելի	31.200 դրամին գումարած 120.000 դրամը գերազանցող գումարի 27.5 տոկոսը

2) հարկային գործակալի միջոցով չհարկվող եկամուտներից եկամտային հարկը հաշվարկվում է հետեւյալ դրույքաչափերով.

ա. ծնված եւ (կամ) որդեգրված եւ խնամվող երեք եւ ավելի երեխա խնամքի տակ ունենալու դեպքում՝

Տարեկան հարկվող եկամտի չափը	Հարկի գումարը
Մինչեւ 1.440.000 դրամ	Հարկվող եկամտի 24.5 տոկոսը
1.440.000 դրամից ավելի	352.800 դրամին գումարած 1.44.000 դրամը գերազանցող գումարի 26 տոկոսը

բ. ծնված եւ (կամ) որդեգրված եւ խնամվող երկու երեխա խնամքի տակ ունենալու դեպքում՝

Տարեկան հարկվող եկամտի չափը	Հարկի գումարը
Մինչեւ 1.440.000 դրամ	Հարկվող եկամտի 25 տոկոսը
1.440.000 դրամից ավելի	360.000 դրամին գումարած 1.44.000 դրամը գերազանցող գումարի 26,5 տոկոսը

գ. ծնված եւ (կամ) որդեգրված եւ խնամվող մեկ երեխա խնամքի տակ ունենալու դեպքում՝

Տարեկան հարկվող եկամտի չափը	Հարկի գումարը
Մինչեւ 1.440.000 դրամ	Հարկվող եկամտի 25.5 տոկոսը
1.440.000 դրամից ավելի	367.200 դրամին գումարած 1.44.000 դրամը գերազանցող գումարի 27 տոկոսը

դ. ծնված եւ (կամ) որդեգրված եւ խնամվող երեխա խնամքի տակ չունենալու դեպքում՝

Տարեկան հարկվող եկամտի չափը	Հարկի գումարը
Մինչեւ 1.440.000 դրամ	Հարկվող եկամտի 26 տոկոսը
1.440.000 դրամից ավելի	374.400 դրամին գումարած 1.44.000 դրամը գերազանցող գումարի 27.5 տոկոսը

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

Հիմնավորում

«Բազմազավակ ընտանիքներին աջակցության մասին», «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» եւ «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի ընդունման անհրաժեշտության

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը).

Նախագծերի փաթեթը մշակվել է շրջանառության մեջ է դրվել՝ առաջնորդվելով ՀՀ Նախագահի, Հայաստանի Հանրապետական կուսակցության նախընտրական ՀՀ կառավարության 2008-2012 թվականների գործունեության ծրագրերի դրույթներով:

ՀՀ Նախագահի նախընտրական ծրագրով նախատեսված է ամուր, բազմազավակ, ավանդական հայ ընտանիքը դարձնել օրինաչափություն:

ՀՀ նախընտրական ծրագրում սոցիալական ոլորտի խնդիրներից են՝ սոցիալական համերաշխությունը սերունդների միջեւ, երրորդ եւ հաջորդ երեխաների ծնունդը խրախուսելու եւ կենսապայմանների զգալի բարելավում ապահովող ծրագրերի իրագործումը եւ բազմազավակ ընտանիքների միանվագ աջակցության քայլերի զուգակցումը կենսապայմանների շարունակական բարելավման ծրագրերի հետ:

«Կառավարությունն իր 2008-2012 թվականների գործունեության ծրագրում նախատեսում է սոցիալական ապահովության կարիք ունեցող հասարակության անդամների նվազագույն անհրաժեշտ կարիքների բավարարում՝ սոցիալական թիրախային ծրագրերն ընդլայնելու, ժողովրդագրական ակտիվ քաղաքականություն իրականացնելու ճանապարհով: Ըստ նշված ծրագրի որպես ազգային անվտանգության կարելուագույն բաղադրիչ, ընտանիքը համարվելու է պետական ժողովրդագրական քաղաքականության հիմնական սուբյեկտ: Նշված քաղաքականությունն ուղղված է լինելու ընտանիքի ամրապնդմանը, ծնելիության մակարդակի աճին, մայրության եւ մանկության պաշտպանությանը:

Կառավարությունը նախատեսում է բարեփոխել ընտանեկան նպաստների քաղաքականությունը՝ զգալիորեն ավելացնելով ծրագրի հասցեականությունը: Կառավարությունը ծրագրում է նաեւ բարձրացնել երեխայի ծննդյան միանվագ՝ ներկայումս գործող նպաստի չափը եւ ներդնել երեխաների ծննդյան հաջորդականությամբ պայմանավորված խրախուսման ամբողջական համակարգ:

Հետեւելով կառավարության գործունեությանը՝ նկատում ենք, որ կառավարությունը վերը նշված նպատակներով, վերջին երկու տարիներին, ընդունել է մի շարք կարելու որոշումներ:

Մասնավորապես՝ Համաձայն 2009 թվականի հուլիսի 27-ի «Կառավարության արձանագրային որոշման ժողովրդագրական խնդիրների հաղթահարումը հայտարարվել է որպես պետական քաղաքականության գերակայություն, ազգային պետական անվտանգության ապահովման կարելուագույն տարր, իսկ ընտանիքը՝ պետական ժողովրդագրական քաղաքականության հիմնական սուբյեկտ: Ժողովրդագրական քաղաքականության ռազմավարության հիմնական ուղղություն է համարվել ծնելիության խթանումը՝ երեխաներ ունենալու եւ մեծացնելու համար բարենպաստ պայմաններ ստեղծելու միջոցով («Ժողովրդագրական քաղաքականության ռազմավարության 4.1-րդ կետ), իսկ ըստ այդ նույն ժողովրդագրական քաղաքականության ռազմավարության 5.1-րդ կետի՝ ժողովրդագրական քաղաքականության առանցքային խնդիրը ծնունդների խրախուսումն է՝ երեխաների կյանքի եւ դաստիարակության համար նպաստավոր պայմանների ստեղծման միջոցով:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը եւ առկա խնդիրները.

Վերջին տասնամյակում, ըստ պաշտոնական վիճակագրության, ՀՀ-ում 1000 բնակչի հաշվով ծնունդների թվաքանակը կրճատվել է մոտ 2 անգամ, իսկ բնական աճի մեծությունն անկում է ապրել 4 անգամ:

2010 թվականի ընթացքում, ըստ պաշտոնական վիճակագրության, ՀՀ-ում ծնվել են 45 000 երեխաներ, որոնցից ընտանիքների երեք եւ ավելի երեխաներ են եղել 6600-ը:

2010 թվականին ուսումնասիրությունների արդյունքով, ՀՀ-ում տնային տնտեսությունների թվաքանակը կազմում է 800 000 ընտանիք, որից 4 եւ ավելի երեխաներ ունեցող ընտանիքները կազմում են 15 000 ընտանիքները: Դրանցից ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված եւ ընտանեկան նպաստ ստացող ընտանիքները կազմում են 8 000-ը:

Այս տվյալները հիմք են տալիս ենթադրելու, որ ՀՀ-ում չի ապահովվում ոչ միայն ընդլայնված, այլ նաեւ պարզ վերարտադրությունը: Ծնելիության առումով՝ երկրի անբարենպաստ իրավիճակի ինքնակարգավորման հնարավորությունը, իրատեսական

չէ: Դրան հասնելու միակ ուղին ակտիվ, նպատակային եւ հետետողական պետական միջամտությունն է լինելու:

Ներկայումս գործող ծրագրերով յուրաքանչյուր ծնված առաջին եւ երկրորդ երեխայի համար նշանակվում է ծննդյան միանվագ նպաստ: Այս նպաստը 2011 թ. կազմում է 50,000 դրամ՝ յուրաքանչյուր նորածնի համար (երկվորյակների դեպքում նպաստը կկազմի 100,000 դրամ, եւ այլն): Նախատեսվում է մինչեւ 2021 թ. առաջին եւ երկրորդ երեխայի ծննդյան միանվագ նպաստը հասցնել 97.000 դրամի (ԿԶԾ, կետ 565): Իսկ ընտանիքում ծնված երեք եւ ավելի երեխայի համար նպաստի չափը կազմում է 430 000 դրամ: Նպաստի այդ չափը շարունակաբար աճելու է՝ 430,000 դրամից հասնելով 1 մլն. դրամի: Ընդ որում ծրագրերում չեն ընդգրկվում միայն առավել բարձր եկամուտներ ունեցող ընտանիքները:

Մինչեւ 2 տարեկան երեխա խնամող եւ մասնակի վճարովի արձակուրդում գտնվող անձանց տրամադրվում է ամսական նպաստ՝ 18,000 դրամ, որը 2021 թ. կազմելու է 52,980 դրամ՝ երեխային խնամելու ժամանակաշրջանում նրանց չստացած աշխատավարձը մասնակիորեն փոխհատուցելու նպատակով (ԿԶԾ, կետ 569):

Ելնելով վերը նշված վիճակից, Հայաստանի Հանրապետության Նախագահը 2007թ. փետրվարի 7-ին ՆՀ-37-Ն հրամանագրով հաստատեց՝ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն» փաստաթղթը, ըստ որի ժողովրդագրական բացասական միտումները, ի թիվս այլ երեւույթների, դիտվել է իբրեւ ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիք:

Ռազմավարությամբ սահմանված ժողովրդագրական քաղաքականության նպատակները, առաջնահերթություններն ու առաջադրանքները հիմնված են կոնկրետ սկզբունքների վրա:

Առաջին այդպիսի սկզբունքն է. բոլոր զույգերն ու անհատներն իրավունք ունեն ազատորեն տնօրինելու վերարտադրողական իրենց կյանքն ու վարքագիծը: Մարդիկ իրենց ազատ կամքով եւ ինքնուրույնաբար են որոշում կայացնում, թե քանի երեխա են ունենալու եւ երբ: Այս հարցում նրանց աջակցելու է պետությունը, որն ապահովում է նրանց՝ վերարտադրողական կյանքի իրականացման ու պլանավորման հետ կապված տեղեկատվություն եւ կրթություն ստանալու հնարավորությունը: Պետությունը հոգ է տանելու ապահովելու համար այն կենսամակարդակը, որը նպաստում է երեխաներ ունենալու եւ խնամելու որոշման կայացմանը:

Երկրորդը՝ ընտանիքը հասարակության բնական ու հիմնական բջիջն է, սոցիալական համակարգի հիմնական բաղադրիչը, որին պետք է օժանդակել: Ըստ Հայաստանում գոյություն ունեցող ավանդույթների, կենսաձեւի եւ մշակույթի, ընտանիքն է կրում եւ պահպանում հասարակության հիմնական արժեքները: Ընտանիքն է պատասխանատու երեխաներ ունենալու, խնամելու եւ մեծացնելու համար: Երիտասարդներին միասին ապրելու համար նախապատրաստելուն ուղղված ջանքերը, պատասխանատու ծնողներ դառնալու նրանց գիտակցության ձեւավորումը եւ համապատասխան կենսամակարդակի ապահովումը ժողովրդագրական քաղաքականության ռազմավարության հիմնական խնդիրներից են:

Երրորդը՝ երեխաները պետության եւ ընտանիքի առաջնահերթությունն են: Յուրաքանչյուր երեխային վերապահված է արժանավայել կյանք ապահովող կենսամակարդակ ունենալու, ինչպես նաեւ առողջապահության եւ կրթության

ամենաբարձր մակարդակի ստանդարտներից օգտվելու իրավունքը: Երեխան ունի իր ծնողների, ընտանիքի եւ հասարակության կողմից խնամք եւ օժանդակություն, ինչպես նաեւ պաշտպանություն ստանալու իրավունք՝ ընդդեմ ֆիզիկական եւ հոգեբանական բռնության, խնամքի բացակայության, վատ վերաբերմունքի կամ շահագործման ցանկացած դրսեւորման:

2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Ժողովրդագրական զարգացման քաղաքականության ռազմավարական առաջնահերթությունների իրականացման կոնկրետ առաջադրանքները, միջոցները եւ աշխատանքները նախատեսվում է իրագործել հետեւյալ ուղղություններով.

Ժողովրդագրական զարգացմանն առնչվող իրավական դաշտի կատարելագործում եւ համապատասխանեցում եւ ծնունդների ֆինանսական խրախուսում:

Այս ուղղությամբ անհրաժեշտ գործողություններ են դիտվում՝

- 1) երեխաներ ունենալու եւ մինչեւ 2 տարեկան երեխաների խնամքի համար տրվող դրամական փոխհատուցման եւ սոցիալական օգնության տեսակների ու չափերի քաղաքականության վերանայումը,
- 2) բազմազավակ ընտանիքների համար արտոնյալ պայմանների ստեղծումը,
- 3) բազմազավակ ընտանիքներում երեխաների խնամքի հետ կապված ծախսերի մեծ մասի փոխհատուցումը՝ առաջնահերթությունը տալով նախադպրոցական հաստատությունների հետ կապված ծախսերի, կոմունալ ծախսերի փոխհատուցմանը, հողի հարկի եւ գույքահարկի արտոնություններ տալուն.
- 4) բազմազավակ ընտանիքների՝ մինչեւ 18 տարեկան զավակների համար պետական պատվերի շրջանակներում, իսկ ծնողների համար՝ առանց նախապայմանների բժշկի խորհրդատվությունից եւ առողջապահական ծառայություններից անվճար օգտվելու հնարավորությունների ստեղծումը,
- 5) բազմազավակ ընտանիքներին բնակարանով ապահովելու ծրագրերի ընդլայնում (բնակարանի ձեռքբերում ֆինանսական ավելի մեղմ պայմաններով):

Ներկայացված նախագծով առաջարկվում է ընտանիքներին, որտեղ ծնվել եւ (կամ) որդեգրվել են եւ խնամվում են չորս եւ ավելի երեխաներ, որոնք չունեն նվազագույն սոցիալական չափորոշիչներին համապատասխան բնակելի տարածք եւ վերջին երեք տարիների ընթացքում չեն օտարել սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածքը, ցուցաբերել աջակցություն՝ սեփականության իրավունքով տրամադրելով բնակարան՝ 25 տարի չօտարելու պայմանով:

Նվազագույն սոցիալական չափորոշիչներին համապատասխան՝ բնակելի տարածք է համարվում բնակարանի տարածքի այնպիսի չափը, որն ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար պակաս չէ 15 քառակուսի մետրից:

Նախագծով առաջարկվող լրացումը բխում է ՀՀ կառավարության գործունեության ծրագրով նախատեսված՝ բազմազավակ ընտանիքների կենսապայմանների շարունակական բարելավման բազմանդամ ընտանիքներին շարունակական աջակցության դրույթներից:

3. Կարգավորման առարկան.

Նախագծերի փաթեթով առաջարկվում է սոցիալական համակարգում ներդնել բազմազավակություն հասկացությունը, նախատեսել բազմազավակության ֆինանսական աջակցության ծրագրեր որպես ժողովրդագրական խնդրի լուծման արդյունավետ ճանապարհ:

4. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը.

Նախագծերի փաթեթի ընդունման դեպքում՝

Բազմազավակ ընտանիքները դուրս կգան ընտանեկան նպաստի համակարգից եւ նրանց ֆինանսական վիճակը բարձր կլինի աղքատության շեմից:

Նախագծերի փաթեթի ընդունման դեպքում ենթադրելի է, որ ՀՀ-ի մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշում հնարավոր կլինի ծնունդների թվաքանակն աճեցնել մոտ երկու անգամ եւ հետեւաբար մոտակա ժամանակահատվածում կանգնեցնել բնական աճի անկումը: